

ԱԿԱՓԻՍ

ՓԱՌՔ ԱՍՏԾՈՒՆ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

ԿՈՆԴԱԿ 1

Հավիտենական դարերի Թագավորին՝ իր փրկարար նախախնամության ուժով՝ բոլոր մարդկային ճանապարհները ձեռքում պահողին. շնորհակալ ենք Քեզ՝ բոլոր հայտնի և անտեսանելի բարեգործությունների համար, Քո ապագա Թագավորության երկնային ուրախության համար: Ու ապագայում էլ փոքր Քո ողորմությունը մեր՝ երգողներին առջև.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԻԿՈՍ 1

Թույլ, անօգնական երեխա ծնվեցի եւ աշխարհում, բայց Քո հրեշտակը փռեց իր լուսավոր թևերը՝ պահպանելով իմ օրորոցը: Այդ ժամանակվանից Քո սերը շողում է իմ բոլոր ճանապարհներին՝ հրաշալի ղեկավարելով ինձ դեպի հավերժական լույսը: Փառաբանում եմ առատաձեռն պարգևները Քո Նախախնամության, որոնք հայտնվել են ինձ առաջին օրվանից մինչև այժմ: Շնորհակալ եմ, և բոլոր Քեզ ճանաչողների հետ կանչում եմ.

Փառք Քեզ, ինձ կյանքի կոչող.

Փառք Քեզ, ամբողջ աշխարհի գեղեցկությունն ինձ ներկայացնող:

Փառք Քեզ, իմ առջև երկինքն ու երկիրը՝ ինչպես իմաստության հսկայական գիրք բացող.

Փառք Քո հավերժությանը՝ ժամանակավոր աշխարհում:

Փառք Քեզ՝ Քո գաղտնի ու հայտնի բարության համար.

Փառք Քեզ, իմ կրծքում ամեն հոգոցի համար:

Փառք Քեզ, կյանքի ամեն քայլի համար, երջանկության ամեն մի վայրկյանի համար.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 2

Տեր Աստված, լավ է Քեզ հյուր լինելը, քաղցրաբույր օդը, սարերը՝ երկինք բարձրացող, ջրերը՝ ինչպես անսահման հայլիներ, որոնք արտացոլում են ոսկեգույն շողերն ու ամպերի թեթևությունը: Ամբողջ բնությունը գաղտնի շշնջում է, ամեն ինչը լցված է քնքշանքով: Եվ թռչուններն ու գազանները կրում են Քո սիրո կնիքը: Օրհնված է մայր երկիրն իր արագընթաց գեղեցկությամբ՝ արթնացնելով հավերժական ծննդավայրի կարոտ, որտեղ անապական գեղեցկությամբ կանչում են.

Ալլելույա:

ԻԿՈՍ 2

Դու բերեցիր մեզ այս կյանք, ինչպես հմայիչ դրախտ: Մենք տեսանք կապույտ երկինքը, ինչպես երկնագույն գավաթ, որի լազուրում դողանջում են թռչունները, մենք լսեցինք անտառի խաղաղ աղմուկը, ջրերի քաղցրահունչ երաժշտությունը, մենք կերել ենք անուշահոտ քաղցրահամ պտուղներ և բուրավետ մեղր: Լավ է Քեզ մոտ երկրի վրա, երջանիկ՝ Քո հյուրընկալությունում.

Փառք Քեզ կյանքի տոնի համար.

Փառք Քեզ անուշահոտ հովտաշուշանների ու վարդերի համար:

Փառք Քեզ բազմազան քաղձր պտուղների և հատապտուղների համար:

Փառք Քեզ առավոտյան շաղի ադամադե փայլի համար:

Փառք Քեզ արթնացնող լուսավոր ժպիտի համար:

Փառք Քեզ երկրային կյանքի համար, որը երկնային նախանշան է:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 3

Սուրբ Հոգու ուժի բույրով է պատված ամեն մի ծաղիկ. բուրմունքի խաղաղ ծածանումը, գույների քնքշությունը, գեղեցկությունը Մեծության՝ փոքրի մեջ: Փառք ու պատիվ Կենսատու Աստծուն, որ մարգագետինները փռում է ինչպես ծաղկած գորգ, պսակադրված դաշտերը՝ ոսկե հասկերով, տերեփուկները՝ լազուրով, իսկ հոգիները՝ բերկրանքով ողողված: Զվարճացեք և երգեք Նրան. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 3

Ինչ հիանալի ես Դու գարնան տոնակատարությանը, երբ վերածնվում է ամեն մի արարած ու հազար տոնայնություններով ուրախությամբ կանչում է Քեզ. Դու՝ կյանքի աղբյուր, Դու՝ մահը հաղթող: Լուսնի լույսի տակ և սոխակների երգերով կանգնած են հարթավայրերն ու անտառները, իրենց ճերմակ հարսնաքողերով: Ամբողջ աշխարհը Քո հարսնացուն է, նա սպասում է Քեզ, Անեղծ Փեսացուն: Եթե Դու կանաչ խոտին ես այսպես հազցնում, ապա ինչպե՞ս մեզ կկերպարանափոխես վերակենդանության ապագա դարում, ինչպե՞ս կլուսավորվեն մեր մարմինները, ինչպե՞ս կփայլեն հոգիները:

Փառք Քեզ, երկրի խավարից բազմազան գույներ, համ ու հոտ հայթայթողին.

Փառք Քեզ՝ Քո ամբողջ բնության սիրալիության և փաղաքշանքի համար:

Փառք Քեզ նրա համար, որ Դու շրջապատեցիր մեզ Քո հազարավոր

ստեղծագործություններով:

Փառք Քեզ՝ Քո խորը բանականության համար, որը դրոշմվել է ամբողջ աշխարհում:

Փառք Քեզ, աստվածափառորեն համբուրում եմ Քո անտեսանելի ոտնահետքերը:

Փառք Քեզ, հավերժական կյանքի առջևում ցայտուն լույս վառող:

Փառք Քեզ՝ անմահ, անթերի, անապական գեղեցկության հույսի համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 4

Ինչպես ես Դու քաղցրացնում Քո մասին մտածողներին, ինչքան կենսարար է Քո սուրբ Խոսքը, ձիթայուղից փափուկ և մեղրից քաղցր են զրույցները Քեզ հետ: Աղոթքը Քեզ՝ թևավորում ու կենսավորում է. ինչ թրթիռով է այդ ժամանակ լցվում սիրտը, և ինչ հսկայական ու բանական են դառնում բնությունն ու ամբողջ կյանքը: Որտեղ Դու չկաս՝ այնտեղ դատարկություն է: Որտեղ Դու՝ այնտեղ հոգու հարստություն, այնտեղ կենդանի հեղեղով լցվում է երգը. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 4

Երբ երկրի վրա իջնում է մայրամուտը, երբ սկսում է թագավորել գիշերվա քնի հանգիստը և լռություն է հանգչող օրվա մեջ, ես տեսնում եմ Քո դոյակները՝ փայլող ապարանքների կերպարով և արշալույսի ամպային շողքերով: Կրակն ու ծիրանին, ոսկին ու լազուրը մարգարեաբար խոսում են Քո անասելի գեղեցկության մասին, գաղտնորեն կանչում են. գնա՛նք Հոր մոտ:

Փառք Քեզ երեկոյան խաղաղ ժամին.

Փառք Քեզ, աշխարհին մեծագույն հանգստություն տվող:

Փառք Քեզ մայր մտնող արևի հրաժեշտի շողի համար.

Փառք Քեզ բարի քնի հանգստի համար:

Փառք Քեզ խավարի մեջ Քո բարության համար, երբ ամբողջ աշխարհը հեռու է.

Փառք Քեզ հուզված հոգու խոնարհ աղոթքների համար :

Փառք Քեզ խոստացած զարթոնքի՝ հավերժ մայր չմտնող օրվա խնդրության համար.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 5

Կենցաղային փոթորիկները սարսափելի չեն նրանց համար, ում սրտերում շողում է Քո լուսամփոփի կրակը: Ամենուր վատ եղանակ է ու մութ, քամու սարսափ ու ոռնանք: Իսկ հոգում խաղաղություն է ու լույս, այնտեղ տաք է ու հանգիստ, այնտեղ Քրիստոսն է: Եվ սիրտը երգում է. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 5

Ես տեսնում եմ աստղերով շողացող Քո երկինքը: Ով՛, ինչքան Դու հարուստ ես, ինչքան՝ Դու լույս ունես: Հեռավոր լուսամփոփների շողերով ինձ է նայում հավերժությունը. ես այնքան փոքր ու ոչինչ եմ, բայց ինձ հետ է Աստվածը, Նրա սիրալիր աջը ամեն տեղ պահպանում է ինձ:

Փառք Քեզ իմ մասին չդադարող խնամքի համար.

Փառք Քեզ մարդկանց հետ ձեռք բերած հանդիպումների համար:

Փառք Քեզ հարազատների սիրո և ընկերների հավատարմության համար.

Փառք Քեզ ինձ ծառայող կենդանիների հեգության համար:

Փառք Քեզ իմ կյանքի լուսավոր բույներին համար.

Փառք Քեզ սրտի պարզ ուրախությունների համար:

Փառք Քեզ ապրելու, շարժվելու, դիտելու երջանկության համար.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 6

Ի՛նչ հսկայական ու մոտեւ Դու փոթորիկների ժամանակ, ինչպես՝ է երևում Քո ամենակարող ձեռքը շլացուցիչ կայծակի ոլորաններում, հիանալի է վեհությունը Քո: Աստծու ձայնը դաշտերի վրա է, անտառների աղմկում. Աստծու ձայնը ամպրոպի ու անձրևի հանդեսում է. Աստծու ձայնը բոլոր ջրերի վրա է: Գովերգում ենք Քեզ հրաշունչ սարերի դրոշմներում: Դու թափահարում ես երկիրն ինչպես հագուստը: Դու մինչև երկինք ես բարձրացնում ծովի ալիքները: Գովերգում ենք Քեզ մարդկային հպարտությունը հնազանդեցնելու համար, որը դուրս է կորչում ապաշխարության ողբը. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 6

Ինչպես կայծակը, երբ լուսավորում է խնջույքի շքասենյակը, ապա դրանից հետո խղճուկ են երևում լուսամփոփի կրակները, այդպես Դու՝ հանկարցակի փայլեցիր իմ հոգում՝ կյանքիս ամենաուժեղ ուրախությունների ժամանակ: Եվ Քո շանթահար լույսից հետո ինչպիսի անգույն, մութ, անիրական թվացին նրանք: Հոգիս նետվեց Քո հետևից.

Փառք Քեզ, մարդկային բարձրագույն երազանքների Անծայրություն ու Անսահմանություն:

Փառք Քեզ Աստծու հետ հաղորդվելու մեր չհագեցված ծարավի համար:

Փառք Քեզ մեր մեջ երկրային անբավարարություն ներշնչելու համար.

Փառք Քեզ լույսի նրբագույն շողերով մեզ պատելու համար:

Փառք Քեզ մութ հոգիների իշխանության ջախջախողին, ամեն մի չարը

ոչնչացման դատապարտողին.

Փառք Քեզ Քո հայտնության համար, Քեզ զգալու երջանկության ու Քեզ հետ ապրելու համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 7

Ձայների հիանալի ներդաշնակությամբ լսվում է Քո կանչը: Դու բացում ես մեզ գալիք դրախտի նախադռները և երգի մեղեդիությունը ներդաշնակ երանգներով՝ երաժշտական գույների բարձունքում, գեղարվեստական ստեղծագործությունների փայլերում: Ամեն ճիշտ գեղեցիկը զորավոր կոչով տանում է հոգին Քեզ մոտ, ստիպում է հանդիսավոր երգել. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 7

Սուրբ Հոգու ներշնչանքով Դու լուսավորում ես նկարիչների, պոետների և գիտության հանճարների միտքը: Բարձրագույն Գիտակցության ուժով նրանք մարգարեաբար ըմբռնում են Քո օրենքները՝ բացահայտելով մեզ Քո ստեղծագործական իմաստության անհունությունը: Նրանց գործերը ակամայից խոսում են Քո մասին, ո՛վ, ինչքան մեծ ես Դու Քո ստեղծագործումներու, ո՛վ, ինչքան մեծ ես Դու մարդու մեջ:

Փառք Քեզ, տիեզերական օրենքներում անհասկանալի ուժ ներկայացնող.

Փառք Քեզ՝ ամբողջ բնությունը լի է Քո գոյության օրենքներով:

Փառք Քեզ՝ Քո բարոության մեր առաջ ամեն բացվածի համար.

Փառք Քեզ նրա համար, որ Դու Քո իմաստությամբ թաքցրիր :

Փառք Քեզ մարդկային հանճարեղ մտքի համար.

Փառք Քեզ աշխտանքի կենարար ուժի համար:

Փառք Քեզ ոգևորության կրակոտ լեզուների համար.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 8

Ինչ մոտ էս Դու հիվանդության օրերին, Դու ինքդ էս այցելում հիվանդներին, Դու խոնարհվում էս տանջվողական օթյակին և սիրտը զրուցում է Քեզ հետ: Դու մեռնով լուսավորում էս հոգին՝ ծանր ողբերգությունների ու տանջանքների ժամանակ, Դու ուղարկում էս անսպասելի օգնություն: Դու մխիթարող էս, Դու սեր էս՝ զգայուն ու փրկող: Քեզ երգ ենք երգում. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 8

Երբ էս մանկությունում արաջին անգամ գիտակցաբար կանչեցի Քեզ, Դու կատարեցիր իմ աղոթանքն ու հոգիս պատեց աստվածային խաղաղությամբ: Այդ ժամանակ հասկացա, որ Դու բարիք էս և երջանիկ են Քեզ մոտ եկողները: Ու սկսեցի կանչել Քեզ նորից ու նորից և մինչև այժմ կանչում եմ.

Փարք Քեզ, իմ բարի ցանկությունների կատարող.

Փառք Քեզ, որ գիշեր ու ցերեկ զգոն էս ինձ համար:

Փառք Քեզ՝ բուժիչ ժամանակի ընթացքով վիտշն ու կորուստը բժշկող.

Փառք Քեզ՝ Քեզ հետ չկան անհույս կորուստներ: Դու բոլորին պարգևում էս հավերժական կյանք:

Փարք Քեզ, Դու անմահություն պարգևեցիր ամեն բարուն ու բարձրին, Դու խոստացար մեզ ցանկալի հանդիպումը՝ մահացածների հետ:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 9

Ինչի՞ց է, որ բնությունը գաղտնաբար ժպտում է Քո տոնական օրերին: Ինչի՞ց է, որ սիրտը լցվում է հրաշալի թեթևությամբ՝ ոչ մի երկրայինով չհամեմատվող, և զոհասեղանի ու եկեղեցու օդը դառնում է լուսաբեր: Դա Քո վերին օրհնության ծածանումն է, դա Ֆավորյան լույսի փայլն է, երբ երկինքն ու երկիրը գովաբանորեն երգում են. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 9

Երբ Դու ոգեշնչեցիր ինձ՝ ծառայել մերձավորին, իսկ հոգիս լուսավորեցիր հնազանդությամբ, այդ ժամանակ Քո անթիվ շողերից մեկն ընկավ իմ սրտի մեջ, և այն դարձավ լուսակիր, ինչպես երկաթը՝ կրակի մեջ: Ես տեսա Քո խորհրդավոր, անորսակի Կերպարանքը:

Փառք Քեզ, մեր կյանքը բարի գործերով կերպարանափոխող .

Փառք Քեզ՝ Քո ամեն մի պատվիրանում անասելի քաղցրություն դրոշմող:

Փառք Քեզ՝ ակնհայտորեն հայտնվող այնտեղ, որտեղ անուշաբուրում է բարեսրտությունը.

Փառք Քեզ, որ մեզ ուղարկում ես անհաջողություններ ու տխրություն, որպեսզի մենք լինենք զգոն՝ ուրիշի տառապանքներին:

Փառք Քեզ, ով մեծ պարգև է դրել բարու ինքնարժեքին.

Փառք Քեզ՝ բարձրագույն ոգևորությունն ընդունողին:

Փառք Քեզ, սերը՝ բոլոր երկրայինից ու երկնայինից վերև բարձրացնողին.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 10

Փշրվածը չի կարելի վերականգնել, բայց Դու վերականգնում ես նրանց, ում խիղճը մոխրացել է, Դու վերադարձնում ես անհույս կորցրած նախկին գեղեցկությունը՝ հոգիներին: Քեզ հետ չկա ոչինչ անուղղելի: Դու ամբողջությամբ սեր ես: Դու՝ Ստեղծող և Վերակերտող: Քեզ գովում ենք երգով. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 10

Աստված իմ, հպարտ հրեշտակ Դեննիցի պառակտման ականատես , փրկիր ինձ Քո վերին օրհնության ուժով, մի թող ինձ՝ անջատվել Քեզանից, մի թող երկմտեմ Քեզ: Սրի՛ր իմ լսողությունը, որպեսզի իմ կյանքի բոլոր վայրկյաններում լսեմ Քո գաղտնի ձայնը և կանչեմ Քեզ՝ Ամենափառիդ.

Փառք Քեզ՝ նախամտադրված հանգամանքների ընթացքի համար.

Փառք Քեզ՝ բարեշնորհ նախազգացմունքների համար:

Փառք Քեզ՝ ներքին ձայնն ի ցույց դնելու համար.

Փառք Քեզ՝ երագում և արթուն ժամանակ՝ հայտնությունների համար:

Փառք Քեզ՝ մեր անօգտակար մտադրությունները վերացնելու համար.

Փառք Քեզ, կրքերից հարբած վիճակում մեզ տառապանքներով սթափեցնելու համար:

Փառք Քեզ, սրտի գոռոգությունը փրկաբար հնազանդեցնելու համար.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 11

Դարերի սառցե շղթաների միջից ես զգում եմ Քո Աստվածային շնչառության տաքությունը, լսում եմ արյան շիթը: Դու արդեն մոտ ես, ժամանակի մի մասը փչվեց: Ես տեսնում եմ Քո Խաչը, այն ինձ համար է: Իմ հոգին աճյուն է Խաչի առաջ. այստեղ սիրո և փրկության տոնակատարություն է, այստեղ չի լռում գովքը հավիտյան. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 11

Երջանիկ է նա, ով կըմբոխշնի ընթրիքը Քո Թագավորությունում, բայց Դու արդեն երկրի վրա հաղորդակից արիր ինձ այդ երջանկությանը: Քանի անգամ Դու Աստվածային աջ ձեռքով սփռել ես ինձ Քո Մարմինն ու Արյունը, և ես՝ անչափ մեղավորս, ընդունել եմ այդ սրբությունն ու զգացել Քո սերը՝ անպատմելի, գերբնական:

Փառք Քեզ վերին օրհնության անհասկանալի կենսաբար ուժի համար.

Փառք Քեզ, Քո Եկեղեցին կանգնեցնող, ինչպես խաղաղ հանգրվան՝ տանջվող աշխարհի համար:

Փառք Քեզ, մկրտության կենսաբար ջրերով մեզ վերածնող.

Փառք Քեզ, Դու մեղանշողներին վերադարձնում ես դյուրաբեկ շուշանների մաքրությունը:

Փառք Քեզ թողության չցամաքող անդունդ.

Փառք Քեզ կյանքի գավաթի համար, հավիտյան երջանկության հացի համար:

Փառք Քեզ՝ մեզ դեպի երկինք բարձրացնող.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 12

Ես շատ անգամ եմ տեսել Քո փառքի արտացոլումը՝ մեռնողների դեմքին: Ինչպիսի՛ չնաշխարհիկ գեղեցկությամբ ու երջանկությամբ լուսավորված էին նրանք, ինչպիսի՛ թափանցիկ, աննյութական էին նրանց դիմագծերը. դա ձերք բերած երջանկության ու հանգստության հանդես էր. լռությամբ նրանք կանչում էին Քեզ: Իմ վերջին ժամին իմ հոգին էլ լուսավորի՛ր, որը կանչում է. **Ալլելույա:**

ԻԿՈՍ 12

Ի՞նչ է իմ գովասանքը Քո առաջ: Ես չեմ լսել Քերովբեների երգերը, դա բարձր հոգիների բախտավորությունն է, բայց ես գիտեմ ինչպես է Քեզ գովաբանում բնությունը: Ձմռանը ես տեսել եմ, ինչպես լուսնի լռության մեջ ամբողջ աշխարհը մեղմ աղոթում է Քեզ՝ զգեստավորված սպիտակ շուրջառում, փայլելով ձյան ադամանդներով: Ես տեսել եմ, ինչպես է ուրախանում Քեզ համար դուրս եկող արևը, և թռչունների երգչախմբերը թնդացնում են Քո գովասանքը: Ես լսել եմ, ինչպես թաքուն Քո մասին աղմկում է անտառը, երգում են քամիները, քչքչում են ջրերը, ինչպես քարոզում են լուսատուների երգչախմբերն իրենց բարեկազմ շարժումներով անվերջանալի տարածությունում: Ի՞նչ է իմ գովքը: Բնությունը լսում է Քեզ, իսկ ես՝ ոչ, բայց քանի ապրում եմ և տեսնում եմ Քո սերը, ուզում եմ շնորհակալություն հայտնել, աղոթել ու կանչել.

Փառք Քեզ, մեզ լույս ցույց տվողին.

Փառք Քեզ, մեզ աստվածային, անչափ ու խորը սիրով սիրողին:

Փառք Քեզ, լույսով, Հրեշտակների ու Սրբերի խմբերով փարատելու համար.

Փառք Քեզ, Ամենասուրբ Հայր, Քո Թագավորությունը մեզ պատգամելու համար:

Փառք Քեզ, Որդուն Քավության տվողին, որն Իր Արյունով մեզ վերածնեց.

Փառք Քեզ, Սուրբ Հոգի՝ ապագա դարի Կենսատու Արև:

Փառք Քեզ ամեն ինչի համար, ո՛վ Աստվածային Երրորդություն՝ Ամենաբարի.

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

Ո՛վ Ամենաբարի և Կենսատու Երրորդություն: Ընդունիր շնորհակալությունը՝ Քո բոլոր ողորմությունների համար և մեզ արժանի դարձրու Քո բարի գործերին, որպեսզի բազմապատկելով մեզ վստահված տաղանդները՝ լինենք Աստծու հավերժական ուրախության մեջ հաղթական գովքով. **Ալլելույա:**

Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ, հետո 1-ին իկոսն ու 1-ին կոնդակը:

ԱԿԱՓԻՍ

ՓԱՌՔ ԱՍՏԾՈՒՆ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

ԿՈՆԴԱԿ 1

Հավիտենական դարերի Թագավորին՝ իր փրկարար նախախնամության ուժով՝ բոլոր մարդկային ճանապարհները ձեռքում պահողին. շնորհակալ ենք Քեզ՝ բոլոր հայտնի և անտեսանելի բարեգործությունների համար, Քո ապագա Թագավորության երկնային ուրախության համար: Ու ապագայում էլ փոփր Քո ողորմությունը մեր՝ երգողներիս առջև.

Փառք Քեզ Աստված, հավիտյան:

ԻԿՈՍ 1

Թույլ, անօգնական երեխա ծնվեցի ես աշխարհում, բայց Քո հրեշտակը փռեց իր լուսավոր թևերը՝ պահպանելով իմ օրորոցը: Այդ ժամանակվանից Քո սերը շողում

Է իմ բոլոր ճանապարհներին՝ հրաշալի ղեկավարելով ինձ դեպի հավերժական լույսը: Փառաբանում եմ առատաձեռն պարգևները Քո Նախախնամության, որոնք հայտնվել են ինձ առաջին օրվանից մինչև այժմ: Շնորհակալ եմ, և բոլոր Քեզ ճանաչողների հետ քանջում եմ.

Փառք Քեզ, ինձ կյանքի կոչող:

Փառք Քեզ, ամբողջ աշխարհի գեղեցկությունն ինձ ներկաձացնող:

Փառք Քեզ, իմ առջև երկինքն ու երկիրը՝ ինչպես իմաստության հսկայական գիրք բացող:

Փառք Քո հավերժությանը՝ ժամանակավոր աշխարհում:

Փառք Քեզ՝ Քո գաղտնի ու հայտնի բարության համար:

Փառք Քեզ, իմ կրծքում ամեն հոգոցի համար:

Փառք Քեզ կյանքի ամեն քայլի համար, երջանկության ամեն մի վայրկյանի համար:

Փառք Քեզ Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 2

Տեր Աստված, լավ է Քեզ հյուր լինելը, քաղցրաբույր օդը, սարերը՝ երկինք բարձրացող, ջրերը՝ ինչպես անսահման հայլիներ, որոնք արտացոլում են ոսկեգույն շողերն ու ամպերի թեթևվությունը: Ամբողջ բնությունը գաղտնի շշնջում է, ամեն ինչը լցված է քնքշանքով: Եվ թռչուններն ու գազանները կրում են Քո սիրո կնիքը: Օրհնված է մայր երկիրն իր արագընթաց գեղեցկությամբ՝ արթնացնելով հավերժական ծննդավայրի կարոտ, որտեղ անապական գեղեցկությամբ կանջում են. Ալլելույա:

ԻԿՈՍ 2

Դու բերեցիր մեզ այս կյանք, ինչպես հմայիչ դրախտ: Մենք տեսանք կապույտ երկինքը, ինչպես երկնագույն գավաթ, որի լազուրում դողանջում են թռչունները, մենք լսեցինք անտառի խաղաղ աղմուկը, ջրերի քաղցրահունչ երաժշտությունը, մենք կերել ենք անուշահոտ քաղրահամ պտուղներ եվ բուրավետ մեղր: Լավ է Քեզ մոտ երկրի վրա, երջանիկ՝ Քո հյուրընկալությունում:

Փառք Քեզ կյանքի տոնի համար:

Փառք Քեզ ջրի սառնորակ թարմության համար:

Փառք Քեզ անուշահոտ հովտաշուշանների ու վարդերի համար:

Փառք Քեզ բազմազան քաղձր պտուղների և հատապտուղների համար:

Փառք Քեզ առավոտյան շաղի աղամաղե փայլի համար:

Փառք Քեզ արթնացնող լուսավոր ժպիտի համար:

Փառք Քեզ երկրային կյանքի համար, որը երկնային հախանշան է:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 3

Սուրբ Հոգու ուժի բույրով է պատված ամեն մի ծաղիկ. բուրմունքի խաղաղ ծածանումը, գույների քնքշությունը, գեղեցկությունը Մեծության՝ փոքրի մեջ: Փառք ու պատիվ Կենսատու Աստծուն, որ մարգագետինները փռում է ինչպես ծաղկած գորգ, պսակադրված դաշտերը՝ ոսկե հասկերով, տերեփուկները՝ լազուրով, իսկ հոգիները՝ բերկրանքով ողողված: Զվարճացեք և երգեք Նրան. Ալլելույա:

ԻԿՈՍ 3

Ինչ հիանալի ես Դու գարնան տոնակատարությանը, երբ վերածնվում է ամեն մի արարած և հազար տոնայնություններով ուրախությամբ կանչում է Քեզ: Դու՝ կյանքի աղբյուր: Դու՝ մահը հաղթող: Լուսնի լույսի տակ և սոխակների երգերով կանգնած են հարթավայրերն ու անտառները, իրենց ճերմակ հարսնաքողերով: Ամբողջ աշխարհը Քո հարսնացուն է, նա սպասում է Քեզ, Անեղծ Փեսացուն: Եթե Դու կանաչ խոտին ես այսպես հազցնում, ապա ինչպես մեզ կկերպարանափոխես վերակենդանության ապագա դարում, ինչպես կլուսավորվեն մեր մարմինները, ինչպես կփայլեն հոգիները:

Փառք Քեզ, երկրի խավարում բազմազան գույներ, համ ու հոտ ճաշակող:

Փառք Քեզ՝ Քո ամբողջ բնության սիրալիության և փաղաքշանքի համար:

Փառք Քեզ նրա համար, որ Դու շրջապատեցիր մեզ Քո հազարավոր ստեղծագործություններով:

Փառք Քեզ՝ Քո խորը բանականության համար, որը դրոշմվել է ամբողջ աշխարհում:

Փառք Քեզ, աստվածափառորեն համբուրում եմ Քո անտեսանելի ոտնահետքերը:

Փառք Քեզ, հավերժական կյանքի առջևում ցայտուն լույս վառող:

Փառք Քեզ՝ անմահ, անթերի, անապական գեղեցկության հույսի համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 4

Ինչպես ես Դու քաղցրացնում Քո մասին մտածողներին, ինչքան կենսաբար է Քո սուրբ Խոսքը, եղնուց փափուկ և մեղրից քաղցր են զրույցները Քեզ հետ: Աղոթքը Քեզ՝ թևավորում ու կենսավորում է. ինչ թրթիռով է այդ ժամանակ լցվում սիրտը, և ինչ հսկայական ու բանական են դառնում բնությունն ու ամբողջ կյանքը: Որտեղ Դու չկաս՝ այնտեղ դատարկություն է: Որտեղ Դու՝ այնտեղ հոգու հարստություն, այնտեղ կտնդանի հեղեղով լցվում է երգը. Ալլելույա:

ԻԿՈՍ 4

Երբ երկրի վրա իջնում է մայրամուտը, երբ թագավորում է երեկոյան քնի հանգիստը, հանգչող օրվա լույթյան մեջ տեսնում եմ Քո դղյակները՝ փայլող ապարանքների կերպարով, արշալույսի ամպային շողքերում: Կրակն ու ծիրանին, ոսկին ու լազուրը մարգարեաբար խոսում են Քո անասելի գեղեցկության մասին, գաղտնորեն կանչում են. գնանք Հոր մոտ:

Փառք Քեզ երեկոյան աղաղ ժամին:

Փառք Քեզ, աշխարհին մեծագույն հանգստություն տվող:

Փառք Քեզ մայր մտնող արեվի հրաժեշտի շողի համար:

Փառք Քեզ բարի քնի հանգստի համար:

Փառք Քեզ խավարում Քո մոտ լինելու համար, երբ ամբողջ աշխարհը հեռու է:

Փառք Քեզ աղոթքների գորովանքի համար, որոնք հուզում են հոգիները:

Փառք Քեզ խոստացած զարթոնքի՝ հավերժ մայր չմտնող օրվա խնդության համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 5

Կենցաղային փոթորիկները սարսափելի չեն նրանց համար, ում սրտերում շողում է Քո լուսամփոփի կրակը: Ամենուր վատ եղանակ է ու մոթ, քաջամու սարսափ ու ոռնանք: Իսկ հոգում խաղաղություն է ու լույս, այնտեղ տաք է ու հանգիստ, այնտեղ է Քրիստոսը: Եվ սիրտը երգում է. Ալլելույա:

ԻԿՈՍ 5

Ես տեսնովմ եմ աստղերով շողացող Քո երկինքը: Ով՛ ինչքան Դու հարուստ ես, ինչքան՝ Դու լույս ունես: Հերավոր լուսամփոփների շողերով ինձ է նայում հավերժությունը: Ես այնքան փոքր ու ոչինչ եմ, բայց ինձ հետ է Աստվածը, Նրա սիրալիր աջը ամեն

տեղ պահպանում է ինձ:

Փառք Քեզ իմ մասին չղաղարող հոգսերի համար:

Փառք Քեզ մարդկանց հետ ձեռք բերած հանդիպումների համար:

Փառք Քեզ հարազատների սիրո եվ ընկերների հավատարմության համար:

Փառք Քեզ ինձ ծառայող կենդանիների հեգուրծան համար:

Փառք Քեզ իմ կյանքի լուսավոր բույների համար:

Փառք Քեզ սրտերի պարզ ուրախության համար:

Փառք Քեզ ապրելու, շարժվելու, դիտելու համար:

Փառք Քեզ, Աստված հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 6

Ի՛նչ հսկայական ու մոտես Դու փոթորիկների ժամանակ: Ինչպես է երեվում Քո ամենակարող ձեռքը կայծակի շլացուցիչ ոլորաններում: Հիանալի է վեհությունը Քո: Աստծու ձայնը դաշտերի վրա է, անտառների աղմկում: Աստծու ձայնը ամպրոպի ու անձրեվի հանդեսում է, Աստծու ձայնը բոլոր ջրերի վրա է: Գովերգում ենք Քեզ հրաշունչ սարերի դղրոյուններում: Դու թափահարում ես երկիրն ինչպես հագուստը: Դու մինչեվ երկինք ես բարձրացնում ծովի աճիքները: Գովերգում ենք Քեզ մարդկային հպարտությունը հնազանդեցնելու համար, որ դուրս է կորգում ապաշխարության ողբը. Ալլելույա:

ԻԿՈՍ 6

Ինչպես կայծակը, երբ լուսավորում է խնջույքի շքասենյակը, ապա դրանից հետո խղճուկ են երեվում լուսամփոփի կրակները, այդպես Դու՝ հանկարծակի փայլեցիր իմ հոգում՝ կյանքիս ամենաուժեղ երջանկության ժամանակ: Եվ Քո շանթահար լույսից հետո ինչպիսի անգույն, մութ, անիրական թվացին նրանք, հոգիս նետվեց Քո հետեվից:

Փառքք Քեզ՝ Անծայրություն ու Անսահմանություն՝ մարդկային բարձրագույն երազանքների:

Փառք Քեզ Աստծու հետ հաղորդվելու մեր չհագեցված ծարավի համար:

Փառք Քեզ մեր մեջ երկրային անբավարարություն ներշնչելու համար:

Փառք Քեզ մեր մեջ երկնքի հավերժ կարոտ դնելու համար:

Փարք Քեզ լույսի նրբագույն շողերով մեզ պատելու համար:

Փառք Քեզ մութ հոգիների իշխանության ջախջախողին, ամեն մի չարը ոչնչացման դատապարտողին:

Փառք Քեզ Քո հայտնության համար, Քեզ զգալու երջանկության ու Քեզ հետ ապրելու համար:

Փարք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 7

Ձայների հիանալի ներդաշնակությամբ լսվում է Քո կանչը: Երգերի քաղցրալոթությամբ, ներդաշնակ երանգներով, երաժշտական գեղեցկությունների բարձրությամբ, գեղարվեստական ստեղծագործությունների փայլով Դու բացում ես մեզ գալիք դրախտի նախադռները: Ամեն ճիշտ գեղեցիկը գորավոր կոչով տանում է հոգին Քեզ մոտ, ստիպում է հանդիսավոր երգել. Ալլելույա:

ԻԿՈՍ 7

Սուրբ Հոգու ներշնչանքով Դու լուսավորում ես նկարիչների, պոետների և գիտության հանճարների միտքը: Բարձրագույն Գիտակցության ուժով նրանք մարգարեաբար ըմբռնում են Քո օրենքները՝ բացահայտելով մեզ Քո ստեղծագործական իմաստության անհունությունը: Նրանց գործերը ակամայից խոսում են Քո մասին: Ո՛վ, ինչքան մեծ ես Դու Քո ստեղծագործումներու: Ո՛վ, ինչքան մեծ ես Դու մարդու մեջ:

Փառք Քեզ, տիեզերական օրենքներում անհասկանալի իմաստություն ներկայացնող:

Փառք Քեզ՝ ամբողջ բնությունը լի Քո գոյության օրենքներով:

Փառք Քեզ ամեն ինչի համար, որ Քո բարօրությամբ բացված են մեզ հմար:

Փարք Քեզ նրա համար, որ Դու թաքցրիր Քո իմաստությամբ:

Փառք Քեզ մարդկային հանճարեղ մտքի համար:

Փառք Քեզ աշխտանքի կենարար ուժի համար:

Փառք Քեզ ոգևորության կրակոտ լեզուների համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 8

Ինչ մոտ էս Դու հիվանդության օրերին: Դու ինքդ էս այցելում հիվանդներին, Դու խոնարհվում էս տանջվողական օթյակին և սիրտը զրուցում է Քեզ հետ: Դու մեռնով հովացնում էս հոգին՝ ծանրողբերությունների ու տանջանքների ժամանակ: Դու ուղարկում էս անսպասելի օգնություն: Դու մխիթարող էս, Դու սեր էս՝ փորձող ու փրկող: Քեզ երգեր ենք երգում. Ալլելույա:

ԻԿՈՍ 8

Երբ էս մանկությունում արաջին անգամ գիտակցաբար կանչեցի Քեզ, Դու կատարեցիր իմ աղոթանք, և հոգիս պատեց աստվածային խաղաղությամբ: Այդ ժամանակ հասկացա, որ Դու բարիք էս, և երջանիկ են Քեզ մոտ եկողները: Ու սկսեցի կանչել Քեզ նորից ու նորից և մինչև այժմ կանչում եմ.

Փարք Քեզ, իմ ցանկությունների բարի կատարող:

Փառք Քեզ, ինձ վրա օր ու գիշեր արթնացնող:

Փառք Քեզ, խնդրանքից առաջ բարության հեղեղ ուղարկող:

Փառք Քեզ, տրտմությունների բուժող

Փառք Քեզ՝ Քեզ հետ չկան անհույս կորուստներ, Դու բոլորին պարզևում էս հավերժական կյանք:

Փարք Քեզ՝ Դու անմահություն պարզեցիր ամեն բարուն ու բարձրին:

Փառք Քեզ՝ Դու խոստացար մեզ ցանկալի հանդիպումը՝ մահացածների հետ:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 9

Ինչի՞ց է, որ բնությունը գաղտնաբար ժպտում է Քո տոնական օրերին: Ինչի՞ց է, որ սիրտը լցվում է հրաշալի թեթևությամբ՝ ոչ մի երկրայինով չհամեմատվող, և զոհասեղանի և եկեղեցու օղբ դառնում է լուսաբեր: Դա Քո վերին օրհնության ծածանումն է, դա Ֆավորյան լույսի փայլն է, երբ երկինքն ու երկիրը գովաբանորեն երգում են. Ալլելույա:

ԻԿՈՍ 9

Երբ Դու ոգեշնչեցիր ինձ՝ ծառայել մերձավորին, իսկ հոգիս լուսավորեցիր

հնազանդությամբ, այդ ժամանակ Քո անթիվ շողերից մեկն ընկավ իմ սրտի մեջ, և այն դարձավ լուսակիր, ինչպես երկաթը՝ կրակի մեջ: Ես տեսա Քո խորհրդավոր անբռնելի Կերպարանքը:

Փառք Քեզ, մեր կյանքը կերպարանափոխող բարի գործերով:

Փառք Քեզ՝ Քո ամեն մի պատվիրանում անասելի քաղձրություն դրոշմող:

Փառք Քեզ՝ ակնհայտորեն հայտնվող այնտեղ, որտեղ անուշաբուրում է բարեսրտությունը:

Փառք Քեզ, որ մեզ ուղարկում ես անհաջողություններ ու տխրություն, որպեսզի մենք լինենք զգոն՝ ուրիշի տառապանքներին:

Փառք Քեզ, ով մեծ պարգև է դրել բարու ինքնարժեքին:

Փառք Քեզ՝ ամեն բարձր ուժգնությունն ընդունողին:

Փառք Քեզ, սերը՝ բոլոր երկրայինից ու երկնայինից վերև բարձրացնողին:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 10

Փշրվածը չի կարելի վերականգնել, բայց Դու վերականգնում ես նրանց, ում խիղճը մոխրացել է, Դու վերադարձնում ես անհույս կորցրած նախկին գեղեցկությունը՝ հոգիներին: Քեզ հետ չկա ոչինչ անուղղելի: Դու ամբողջությամբ սեր ես: Դու՝ Ստեղծող եվ Վերակերտող: Քեզ գովում ենք երգով. Ալլելույա:

ԻԿՈՍ 10

Աստված՝ իմ, հպարտ հրեշտակ Դեննիցի պառակտումը առաջնորդող: Փրկիր ինձ Քո վերին օրհնության ուժով, մի թող ինձ՝ անջատվել Քեզանից, մի թող մոռանամ Քո բոլոր բարեգործություններն ու պարգևները: Սրի՛ր իմ լսողությունը, որպեսզի իմ կյանքի բոլոր վայրկյաններում լսեմ Քո գաղտնի ձայնը և կանչեմ Քեզ՝ Ամենահասիդ:

Փառք Քեզ բարեշնորհ նախազգացմունքների համար:

Փառք Քեզ՝ ներքին ձայնը մատնացույց անելու համար:

Փառք Քեզ՝ երագում և արթուն ժամանակ՝ հայտնությունների համար:

Փառք Քեզ՝ մեր անօգտակար մտադրությունների կործանողին:

Փառք Քեզ, մեզ տառապանքներից սթափեցնող՝ կրքերից հարբած վիճակում:

Փառք Քեզ, սրտի գոռոզության փրկարար հնազանդեցնող:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 11

Դարերի սառցե շղթաների միջից ես զգում եմ Քո Աստվածային շնչառության տաքությունը, լսում եմ արյան շիրը: Դու արդեն մոտ ես, ժամանակի շղթան քանդվեց, ես տեսնում եմ Քո Խաչը, այն ինձ համար է: Իմ հոգին փռվի է Խաչի առաջ. այստեղ սիրո և փրկության տոնակատարություն է, այստեղ չի լռում գովքը հավիտյան. Ալլելույա:

ԻԿՈՍ 11

Երջանիկ է նա, ով ըմբոխշնել է ընթրիքը՝ Քո Թագավորությունում, բայց Դու արդեն երկրի վրա հաղորդակից արիր ինձ այդ երջանկությանը: Քանի անգամ Դու՝ Աստվածային աջ ձեռքով սփռեցիր ինձ Քո Մարմինն ու Արյունը, և ես՝ անչափ մեղավորս, ընդունեցի այդ սրբությունը և զգացի Քո սերը՝ անպատմելի, գերբնական.

Փառք Քեզ վերին օրհնության անհասկանալի կենսարար ուժի համար:

Փառք Քեզ, Քո Եկեղեցին կանգնեցնող, ինչպես խաղաղ հանգրվան՝ տանջվող աշխարհի համար:

Փառք Քեզ, մկրտության կենսարար ջրերով մեզ վերածնող:

Փառք Քեզ, Դու մեղանչողներին վերադարձնում ես դյուրաբեկ շուշանների մաքրությունը:

Փառք Քեզ թողության չցամաքող խորխորոտ:

Փառք Քեզ կյանքի գավաթի համար, հավիտյան երջանկության հացի համար:

Փառք Քեզ՝ մեզ դեպի երկիք ուղղեկցող:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 12

Ես շատ անգամ եմ տեսել Քո փառքի արտացոլումը՝ մեռնողների դեմքին: Ինչպիսի՜ չնաշխարհիկ գեղեցկությամբ ու երջանկությամբ լուսավորված էին նրանք, ինչպիսի՜ թափանցիկ, աննյութական էին նրանց դիմագծերը: Դա ձերք բերած

երջանկության ու հանգստության հանդես էր: Լռությամբ նրանք կանչում էին Քեզ : Իմ վերջին ժամին լուսավորիք իմ հոգին, որը կանչում է. Ալլելույա:

ԻԿՈՍ 12

Ի՞նչ է իմ գովասանքը Քո առաջ: Ես չեմ լսել քերովբեների երգերը, դա բարձր հոգիների բախտավորությունն է, բայց ես գիտեմ ինչպես է Քեզ գովաբանում բնությունը: Ձմռանը ես ինչպես լուսնի լռության մեջ ամբողջ աշխարհը մեղմ աղոթում է Քեզ՝ զգեստավորված սպիտակ շուրջառում, փայլելով ձյան ադամանդներով: Ես տեսա, ինչպես է ուրախանում Քեզ համար դուրս եկող արևը, և թռչունների խորը թնդացնում էր Քո գովասանքը: Ես լսեցի, ինչպես թաքուն Քո մասին աղմկում է անտառը, երգում են քամիները, քչքչում են ջրերը, ինչպես քարոգում են լուսատուների երգչախմբերն իրենց բարեկազմ շարժումներով՝ անվերջանալի տարածությունում: Ի՞նչ է իմ գովքը: Բնությունը լսում է Քեզ, իսկ ես՝ ոչ, բայց քանի ապրում եմ և տեսնում եմ Քո սերը, ուզում եմ շնորհակալություն հայտնել, աղոթել ու կանչել:

Փառք Քեզ, մեզ լույս ցույց տվողին:

Փառք Քեզ, մեզ անչափ ու խորը սիրով սիրողին:

Փառք Քեզ, մեզ Հրեշտակների և սրբերի լուսավոր շարքերում համակող:

Փառք Քեզ, Ամենասուրբ Հայր, Քո Թագավորությունը մեզ պատգամող:

Փառք Քեզ, Որդուն Քավության տվողին, որն Իր Արյունով մեզ վերածնեց:

Փառք Քեզ՝ Սուրբ Հոգուն, ապագա դարի Կենսատու Արև:

Փառք Քեզ ամեն ինչի համար, ո՛վ Աստվածային Երրորդություն՝ ամենաբարի:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 13

Ո՛վ ամենաբարի և կյանք տվող Երրորդություն: Ընդունիր շնորհակալությունը՝ Քո բոլոր ողորմությունների համար և մեզ արժանի դարձրու Քո բարի գործերին, որպեսզի բազմապատկելով մեզ վստահված տաղանդները՝ լինենք Աստծու հավերժական ուրախության մեջ հաղթական գովքով. Ալլելույա:

Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ, հետո 1-ին իկոսն ու 1-ին կոնդակը

ԱԿԱՓԻՍՏ

ՓԱՌՔ ԱՍՏԾՈՒՆ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

ԿՈՆԴԱԿ 1

Հավիտենական դարերի Թագավորին՝ իր փրկարար նախախնամության ուժով՝ բոլոր մարդկային ճանապարհները ձեռքում պահողին. շնորհակալ ենք Քեզ՝ բոլոր հայտնի և անտեսանելի բարեգործությունների համար, Քո ապագա Թագավորության երկնային ուրախության համար: Ու ապագայում էլ փոփր Քո ողորմությունը մեր՝ երգողներիս առջև.

Փառք Քեզ Աստված, հավիտյան:

ԻԿՈՍ 1

Թույլ, անօգնական երեխա ծնվեցի ես աշխարհում, բայց Քո հրեշտակը փռեց իր լուսավոր թևերը՝ պահպանելով իմ օրորոցը: Այդ ժամանակվանից Քո սերը շողում է իմ բոլոր ճանապարհներին՝ հրաշալի ղեկավարելով ինձ դեպի հավերժական լույսը: Փառաբանում եմ առատաձեռն պարգևները Քո Նախախնամության, որոնք հայտնվել են ինձ առաջին օրվանից մինչև այժմ: Շնորհակալ եմ, և բոլոր Քեզ ճանաչողների հետ քանջում եմ.

Փառք Քեզ, ինձ կյանքի կոչող:

Փառք Քեզ, ամբողջ աշխարհի գեղեցկությունն ինձ ներկաձացնող:

Փառք Քեզ, իմ առջև երկինքն ու երկիրը՝ ինչպես իմաստության հսկայական գիրք

բացող:

Փառք Քո հավերժությանը՝ ժամանակավոր աշխարհում:

Փառք Քեզ՝ Քո գաղտնի ու հայտնի բարության համար:

Փառք Քեզ, իմ կրծքում ամեն հոգոցի համար:

Փառք Քեզ կյանքի ամեն քայլի համար, երջանկության ամեն մի վայրկյանի համար:

Փառք Քեզ Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 2

Տեր Աստված, լավ է Քեզ հյուր լինելը, քաղցրաբույր օդը, սարերը՝ երկինք բարձրացող, ջրերը՝ ինչպես անսահման հայլիներ, որոնք արտացոլում են ոսկեգույն շողերն ու ամպերի թեթևությունը: Ամբողջ բնությունը գաղտնի շնչում է, ամեն ինչը լցված է քնքշանքով: Եվ թռչուններն ու գազանները կրում են Քո սիրո կնիքը: Օրհնված է մայր երկիրն իր արագընթաց գեղեցկությամբ՝ արթնացնելով հավերժական ծննդավայրի կարոտ, որտեղ անապական գեղեցկությամբ կանչում են. Ալլելույա:

ԻԿՈՍ 2

Դու բերեցիր մեզ այս կյանք, ինչպես հմայիչ դրախտ: Մենք տեսանք կապույտ երկինքը, ինչպես երկնագույն գավաթ, որի լազուրում դողանջում են թռչունները, մենք լսեցինք անտառի խաղաղ աղմուկը, ջրերի քաղցրահունչ երաժշտությունը, մենք կերել ենք անուշահոտ քաղրահամ պտուղներ եվ բուրավետ մեղր: Լավ է Քեզ մոտ երկրի վրա, երջանիկ՝ Քո հյուրընկալությունում:

Փառք Քեզ կյանքի տոնի համար:

Փառք Քեզ ջրի սառնորակ թարմության համար:

Փառք Քեզ անուշահոտ հովտաշուշանների ու վարդերի համար:

Փառք Քեզ բազմազան քաղձր պտուղների և հատապտուղների համար:

Փառք Քեզ առավոտյան շաղի ադամադե փայլի համար:

Փառք Քեզ արթնացնող լուսավոր ժպիտի համար:

Փառք Քեզ երկրային կյանքի համար, որը երկնային հախանշան է:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 3

Սուրբ Հոգու ուժի բույրով է պատված ամեն մի ծաղիկ.բուրմունքի խաղաղ ծածանումը, գույների քնքշությունը, գեղեցկությունը Մեծության՝ փոքրի մեջ: Փառք ու պատիվ Կենսատու Աստծուն,որ մարգագետինները փռում է ինչպես ծաղկած գորգ,պսակադրված դաշտերը՝ ոսկե հասկերով , տերեփուկները՝ լազուրով,իսկ հոգիները՝ բերկրանքով ողողված:Զվարճացեք և երգեք Նրան. Ալլելույա:

ԻԿՈՍ 3

Ինչ հիանալի ես Դու գարնան տոնակատարությանը, երբ վերածնվում է ամեն մի արարած և հազար տոնայնություններով ուրախությամբ կանչում է Քեզ: Դու՝ կյանքի աղբյուր:Դու՝ մահը հաղթող: Լուսնի լույսի տակ և սոխակների երգերով կանգնած են հարթավայրերն ու անտառները, իրենց ճերմակ հարսնաքողերով: Ամբողջ աշխարհը Քո հարսնացուն է, նա սպասում է Քեզ, Անեղծ Փեսացուն: Եթե Դու կանաչ խոտին ես այսպես հազցնում, ապա ինչպես մեզ կկերպարանափոխես վերակենդանության ապագա դարում, ինչպես կլուսավորվեն մեր մարմինները, ինչպես կփայլեն հոգիները:

Փառք Քեզ, երկրի խավարում բազմազան գույներ , համ ու հոտ ճաշակող:

Փառք Քեզ՝ Քո ամբողջ բնության սիրալիության և փաղաքշանքի համար:

Փառք Քեզ նրա համար,որ Դու շրջապատեցիր մեզ Քո հազարավոր ստեղծագործություններով:

Փառք Քեզ՝ Քո խորը բանականության համար,որը դրոշմվել է ամբողջ աշխարհում:

Փառք Քեզ, աստվածափառորեն համբուրում եմ Քո անտեսանելի ոտնահետքերը:

Փառք Քեզ, հավերժական կյանքի առջևում ցայտուն լույս վառող:

Փառք Քեզ՝ անմահ, անթերի, անապական գեղեցկության հույսի համար:

Փառք Քեզ , Աստված, հավիտյան:

Ինչպես ես Դու քաղցրացնում Քո մասին մտածողներին, ինչքան կենսաբար է Քո սուրբ Խոսքը, եղևնուց փափուկ և մեղրից քաղցր են զրույցները Քեզ հետ: Աղոթքը Քեզ՝ թևավորում ու կենսավորում է. ինչ թրթիռով է այդ ժամանակ լցվում սիրտը, և ինչ հսկայական ու բանական են դառնում բնությունն ու ամբողջ կյանքը: Որտեղ Դու չկաս՝ այնտեղ դատարկություն է: Որտեղ Դու՝ այնտեղ հոգու հարստություն, այնտեղ կտնդանի հեղեղով լցվում է երգը. Ալլելույա:

ԻԿՈՍ 4

Երբ երկրի վրա իջնում է մայրամուտը, երբ թագավորում է երեկոյան քնի հանգիստը, հանգչող օրվա լուսության մեջ տեսնում եմ Քո դղյակները՝ փայլող ապարանքների կերպարով, արշալույսի ամպային շողքերում: Կրակն ու ծիրանին, ոսկին ու լազուրը մարգարեաբար խոսում են Քո անասելի գեղեցկության մասին, գաղտնորեն կանչում են. գնանք Հոր մոտ:

Փառք Քեզ երեկոյան աղաղ ժամին:

Փառք Քեզ, աշխարհին մեծագույն հանգստություն տվող:

Փառք Քեզ մայր մտնող արեվի հրաժեշտի շողի համար:

Փառք Քեզ բարի քնի հանգստի համար:

Փառք Քեզ խավարում Քո մոտ լինելու համար, երբ ամբողջ աշխարհը հեռու է:

Փառք Քեզ աղոթքների գործվանքի համար, որոնք հուզում են հոգիները:

Փառք Քեզ խոստացած զարթոնքի՝ հավերժ մայր չմտնող օրվա խնդության համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 5

Կենցաղային փոթորիկները սարսափելի չեն նրանց համար, ում սրտերում շողում է Քո լուսամփոփի կրակը: Ամենուր վատ եղանակ է ու մոթ, քՄԻամու սարսափ ու ոռնանք: Իսկ հոգում խաղաղություն է ու լույս, այնտեղ տաք է ու հանգիստ, այնտեղ է Քրիստոսը: Եվ սիրտը երգում

է. Ալլելույա:

ԻԿՈՍ 5

Ես տեսնովմ եմ աստղերով շողացող Քո երկինքը: Ով՛ ինչքան Դու հարուստ ես, ինչքան՝ Դու լույս ունես: Հերավոր լուսամփոփների շողերով ինձ է նայում հավերժությունը: Ես այնքան փոքր ու ոչինչ եմ, բայց ինձ հետ է Աստվածը, Նրա սիրալիք աջը ամեն տեղ պահպանում է ինձ:

Փառք Քեզ իմ մասին չղաղարող հոգսերի համար:

Փառք Քեզ մարդկանց հետ ձեռք բերած հանդիպումների համար:

Փառք Քեզ հարազատների սիրո եվ ընկերների հավատարմության համար:

Փառք Քեզ ինձ ծառայող կենդանիների հեգուրծան համար:

Փառք Քեզ իմ կյանքի լուսավոր րոպեների համար:

Փառք Քեզ սրտերի պարզ ուրախության համար:

Փառք Քեզ ապրելու, շարժվելու, դիտելու համար:

Փառք Քեզ, Աստված հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 6

Ի՛նչ հսկայական ու մոտ ես Դու փոթորիկների ժամանակ: Ինչպես է երեվում Քո ամենակարող ձեռքը կայծակի շլացուցիչ ոլորաններում: Հիանալի է վեհությունը Քո: Աստծու ձայնը դաշտերի վրա է, անտառների աղմկում: Աստծու ձայնը ամպրոպի ու անձրեվի հանդեսում է, Աստծու ձայնը բոլոր ջրերի վրա է: Գովերգում ենք Քեզ հրաշունչ սարերի դղրոյուններում: Դու թափահարում ես երկիրն ինչպես հագուստը: Դու մինչեւ երկինք ես բարձրացնում ծովի աճիքները: Գովերգում ենք Քեզ մարդկային հպարտությունը հնազանդեցնելու համար, որ դուրս է կորգում ապաշխարության ողբը. Ալլելույա:

ԻԿՈՍ 6

Ինչպես կայծակը, երբ լուսավորում է խնջույքի շքասենյակը, ապա դրանից հետո խղճուկ են երեվում լուսամփոփի կրակները, այդպես Դու՝ հանկարծակի փայլեցիր իմ հոգում՝ կյանքիս ամենաուժեղ երջանկության

Ժամանակ: Եվ Քո շանթահար լույսից հետո ինչպիսի անգույն, մութ, անիրական թվացին նրանք, հոգիս նետվեց Քո հետեվից:

Փառք Քեզ՝ Անծայրություն ու Անսահմանություն՝ մարդկային բարձրագույն երազանքների:

Փառք Քեզ Աստծու հետ հաղորդվելու մեր չհագեցված ծարավի համար:

Փառք Քեզ մեր մեջ երկրային անբավարարություն ներշնչելու համար:

Փառք Քեզ մեր մեջ երկնքի հավերժ կարոտ դնելու համար:

Փառք Քեզ լույսի նրբագույն շողերով մեզ պատելու համար:

Փառք Քեզ մութ հոգիների իշխանության ջախջախողին, ամեն մի չարը ոչնչացման դատապարտողին:

Փառք Քեզ Քո հայտնության համար, Քեզ զգալու երջանկության ու Քեզ հետ ապրելու համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 7

Ձայների հիանալի ներդաշնակությամբ լսվում է Քո կանչը: Երգերի քաղցրալուծությամբ, ներդաշնակ երանգներով, երաժշտական գեղեցկությունների բարձրությամբ, գեղարվեստական ստեղծագործությունների փայլով Դու բացում ես մեզ գալիք դրախտի նախադռները: Ամեն ճիշտ գեղեցիկը զորավոր կոչով տանում է հոգին Քեզ մոտ, ստիպում է հանդիսավոր երգել. Ալլելույա:

ԻԿՈՍ 7

Սուրբ Հոգու ներշնչանքով Դու լուսավորում ես նկարիչների, պոետների և գիտության հանճարների միտքը: Բարձրագույն Գիտակցության ուժով նրանք մարգարեաբար ըմբռնում են Քո օրենքները՝ բացահայտելով մեզ Քո ստեղծագործական իմաստության անհունությունը: Նրանց գործերը ակամայից խոսում են Քո մասին: Ո՛վ, ինչքան մեծ ես Դու Քո ստեղծագործումներու: Ո՛վ, ինչքան մեծ ես Դու

մարդու մեջ:

Փառք Քեզ, տիեզերական օրենքներում անհասկանալի իմաստություն ներկայացնող:

Փառք Քեզ՝ ամբողջ բնությունը լի Քո գոյության օրենքներով:

Փառք Քեզ ամեն ինչի համար, որ Քո բարօրությամբ բացված են մեզ հմար:

Փառք Քեզ նրա համար, որ Դու թաքցրիր Քո իմաստությամբ:

Փառք Քեզ մարդկային հանճարեղ մտքի համար:

Փառք Քեզ աշխտանքի կենարար ուժի համար:

Փառք Քեզ ոգևորության կրակոտ լեզուների համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 8

Ինչ մոտ ես Դու հիվանդության օրերին: Դու ինքդ ես այցելում հիվանդներին, Դու խոնարհվում ես տանջվողական օթյակին և սիրտը զրուցում է Քեզ հետ: Դու մեռնով հովացնում ես հոգին՝ ծանր ողբերգությունների ու տանջանքների ժամանակ: Դու ուղարկում ես անսպասելի օգնություն: Դու մխիթարող ես, Դու սեր ես՝ փորձող ու փրկող: Քեզ երգեր ենք երգում. Ալլելույա:

ԻԿՈՍ 8

Երբ ես մանկությունում արաջին անգամ գիտակցաբար կանչեցի Քեզ, Դու կատարեցիր իմ աղոթանք, և հոգիս պատեց աստվածային խաղաղությամբ: Այդ ժամանակ հասկացա, որ Դու բարիք ես, և երջանիկ են Քեզ մոտ եկողները: Ու սկսեցի կանչել Քեզ նորից ու նորից և մինչև այժմ կանչում եմ.

Փառք Քեզ, իմ ցանկությունների բարի կատարող:

Փառք Քեզ, ինձ վրա օր ու գիշեր արթնացնող:

Փառք Քեզ, ինդրանքից առաջ բարության հեղեղ ուղարկող:

Փառք Քեզ, տրտմությունների բուժող

Փառք Քեզ՝ Քեզ հետ չկան անհույս կորուստներ, Դու բոլորին պարզևուրեմ ես հավերժական կյանք:

Փառք Քեզ՝ Դու անմահություն պարզեցիր ամեն բարուն ու բարձրին:

Փառք Քեզ՝ Դու խոստացար մեզ ցանկալի հանդիպումը՝ մահացածների հետ:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 9

Ինչի՞ց է, որ բնությունը գաղտնաբար ժպտում է Քո տոնական օրերին: Ինչի՞ց է, որ սիրտը լցվում է հրաշալի թեթևությամբ՝ ոչ մի երկրայինով չհամեմատվող, և զոհասեղանի և եկեղեցու օդը դառնում է լուսաբեր: Դա Քո վերին օրհնության ծածանումն է, դա Ֆավորյան լույսի փայլն է, երբ երկինքն ու երկիրը գովաբանորեն երգում են. Ալլելույա:

ԻԿՈՍ 9

Երբ Դու ոգեշնչեցիր ինձ՝ ծառայել մերձավորին, իսկ հոգիս լուսավորեցիր հնազանդությամբ, այդ ժամանակ Քո անթիվ շողերից մեկն ընկավ իմ սրտի մեջ, և այն դարձավ լուսակիր, ինչպես երկաթը՝ կրակի մեջ: Ես տեսա Քո խորհրդավոր անբռնելի Կերպարանքը:

Փառք Քեզ, մեր կյանքը կերպարանափոխող բարի գործերով:

Փառք Քեզ՝ Քո ամեն մի պատվիրանում անասելի քաղձրություն դրոշմող:

Փառք Քեզ՝ ակնհայտորեն հայտնվող այնտեղ, որտեղ անուշաբուրում է բարեսրտությունը:

Փառք Քեզ, որ մեզ ուղարկում ես անհաջողություններ ու տխրություն, որպեսզի մենք լինենք զգոն՝ ուրիշի տառապանքներին:

Փառք Քեզ, ով մեծ պարզեց է դրել բարու ինքնարժեքին:

Փառք Քեզ՝ ամեն բարձր ուժգնությունն ընդունողին:

Փառք Քեզ, սերը՝ բոլոր երկրայինից ու երկնայինից վերև
բարձրացնողին:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 10

Փշրվածը չի կարելի վերականգնել, բայց Դու վերականգնում ես
նրանց, ում խիղճը մոխրացել է, Դու վերադարձնում ես անհույս
կորցրած նախկին գեղեցկությունը՝ հոգիներին: Քեզ հետ չկա ոչինչ
անուղղելի: Դու ամբողջությամբ սեր ես: Դու՝ Ստեղծող եվ Վերակերտող:
Քեզ գովում ենք երգով. Ալլելույա:

ԻԿՈՍ 10

Աստված՝ իմ, հպարտ հրեշտակ Դենիցի պառակտումը առաջնորդող:
Փրկիր ինձ Քո վերին օրհնության ուժով, մի թող ինձ՝ անջատվել
Քեզանից, մի թող մոռանամ Քո բոլոր բարեգործություններն ու
պարգևները: Սրի՛ր իմ լսողությունը, որպեսզի իմ կյանքի բոլոր
վայրկյաններում լսեմ Քո գաղտնի ձայնը և կանչեմ Քեզ՝ Ամենահասիդ.

Փառք Քեզ բարեշնորհ նախազգացմունքների համար:

Փառք Քեզ՝ ներքին ձայնը մատնացույց անելու համար:

Փառք Քեզ՝ երագում և արթուն ժամանակ՝ հայտնությունների
համար:

Փառք Քեզ՝ մեր անօգտակար մտադրությունների
կործանողին:

Փառք Քեզ, մեզ տառապանքներից սթափեցնող՝ կրքերից
հարբած վիճակում:

Փառք Քեզ, սրտի գոռոգության փրկարար հնազանդեցնող:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 11

Դարերի սառցե շղթաների միջից ես զգում եմ Քո Աստվածային
շնչառության տաքությունը, լսում եմ արյան շիթը: Դու արդեն մոտ ես,
ժամանակի շղթան քանդվեց, ես տեսնում եմ Քո Խաչը, այն ինձ համար

է: Իմ հոգին փոշի է Խաչի առաջ. այստեղ սիրո և փրկության տոնակատարություն է, այստեղ չի լուռ գովքը հավիտյան. Ալլելույա:

ԻԿՈՍ 11

Երջանիկ է նա, ով ըմբոխշնել է ընթրիքը՝ Քո Թագավորությունում, բայց Դու արդեն երկրի վրա հաղորդակից արիր ինձ այդ երջանկությանը: Քանի անգամ Դու՝ Աստվածային աջ ձեռքով սփռեցիր ինձ Քո Մարմինն ու Արյունը, և ես՝ անչափ մեղավորս, ընդունեցի այդ սրբությունը և զգացի Քո սերը՝ անպատմելի, գերբնական.

Փառք Քեզ վերին օրհնության անհասկանալի կենսարար ուժի համար:

Փառք Քեզ, Քո Եկեղեցին կանգնեցնող, ինչպես խաղաղ հանգրվան՝ տանջվող աշխարհի համար:

Փառք Քեզ, մկրտության կենսարար ջրերով մեզ վերածնող:

Փառք Քեզ՝ Դու մեղանչողներին վերադարձնում ես դյուրաբեկ շուշանների մաքրությունը:

Փառք Քեզ թողության չցամաքող խորխորոտ:

Փառք Քեզ կյանքի գավաթի համար, հավիտյան երջանկության հացի համար:

Փառք Քեզ՝ մեզ դեպի երկիք ուղղեկցող:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 12

Ես շատ անգամ եմ տեսել Քո փառքի արտացոլումը՝ մեռնողների դեմքին: Ինչպիսի՜ չնաշխարհիկ գեղեցկությամբ ու երջանկությամբ լուսավորված էին նրանք, ինչպիսի՜ թափանցիկ, աննյութական էին նրանց դիմագծերը: Դա ձերք բերած երջանկության ու հանգստության հանդես էր: Լռությամբ նրանք կանչում էին Քեզ: Իմ վերջին ժամին լուսավորիր իմ հոգին, որը կանչում է. Ալլելույա:

ԻԿՈՍ 12

Ի՞նչ է իմ գովասանքը Քո առաջ: Ես չեմ լսել քերովբեների երգերը,

դա բարձր հոգիների բախտավորությունն է, բայց ես գիտեմ ինչպես է Քեզ գովաբանում բնությունը: Ձմռանը ես ինչպես լուսնի լույթյան մեջ ամբողջ աշխարհը մեղմ աղոթում է Քեզ՝ զգեստավորված սպիտակ շուրջառում, փայլելով ձյան ադամանդներով: Ես տեսա, ինչպես է ուրախանում Քեզ համար դուրս եկող արևը, և թռչունների խոռը թնդացնում էր Քո գովասանքը: Ես լսեցի, ինչպես թաքուն Քո մասին աղմկում է անտառը, երգում են քամիները, քչքչում են ջրերը, ինչպես քարոզում են լուսատուների երգչախմբերն իրենց բարեկազմ շարժումներով՝ անվերջանալի տարածությունում: Ի՞նչ է իմ գովքը: Բնությունը լսում է Քեզ, իսկ ես՝ ոչ, բայց քանի ապրում եմ և տեսնում եմ Քո սերը, ուզում եմ շնորհակալություն հայտնել, աղոթել ու կանչել:

Փառք Քեզ, մեզ լույս ցույց տվողին:

Փառք Քեզ, մեզ անչափ ու խորը սիրով սիրողին:

Փառք Քեզ, մեզ Հրեշտակների և սրբերի լուսավոր շարքերում համակող:

Փառք Քեզ, Ամենասուրբ Հայր, Քո Թագավորությունը մեզ պատգամող:

Փառք Քեզ, Որդուն Քավության տվողին, որն Իր Արյունով մեզ վերածնեց:

Փառք Քեզ՝ Սուրբ Հոգուն, ապագա դարի Կենսատու Արև:

Փառք Քեզ ամեն ինչի համար, ո՛վ Աստվածային Երրորդություն՝ ամենաբարի:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 13

Ո՛վ ամենաբարի և կյանք տվող Երրորդություն: Ընդունիր շնորհակալությունը՝ Քո բոլոր ողորմությունների համար և մեզ արժանի դարձրու Քո բարի գործերին, որպեսզի բազմապատկելով մեզ վստահված տաղանդները՝ լինենք Աստծու հավերժական ուրախության մեջ հաղթական գովքով. Ալլելույա:

Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ, հետո 1-ին իկոսն ու

1-ին կոնդակը

ԱԿԱՓԻՍՏ

ՓԱՌՔ ԱՍՏԾՈՒՆ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ

ԿՈՆԴԱԿ 1

Հավիտենական դարերի Թագավորին՝ իր փրկարար նախախնամության ուժով՝ բոլոր մարդկային ճանապարհները ձեռքում պահողին. շնորհակալ ենք Քեզ՝ բոլոր հայտնի և անտեսանելի բարեգործությունների համար, Քո ապագա Թագավորության երկնային ուրախության համար: Ու ապագայում էլ փոփր Քո ողորմությունը մեր՝ երգողներիս առջև.

Փառք Քեզ Աստված, հավիտյան:

ԻԿՈՍ 1

Թույլ, անօգնական երեխա ծնվեցի ես աշխարհում, բայց Քո հրեշտակը փռեց իր լուսավոր թևերը՝ պահպանելով իմ օրորոցը: Այդ ժամանակվանից Քո սերը շողում է իմ բոլոր ճանապարհներին՝ հրաշալի ղեկավարելով ինձ դեպի հավերժական լույսը: Փառաբանում եմ առատաձեռն պարգևները Քո Նախախնամության, որոնք հայտնվել են

ինձ առաջին օրվանից մինչև այժմ: Շնորհակալ եմ, և բոլոր Քեզ ճանաչողների հետ քանչում եմ.

Փառք Քեզ, ինձ կյանքի կոչող:

Փառք Քեզ, ամբողջ աշխարհի գեղեցկությունն ինձ ներկաձացնող:

Փառք Քեզ, իմ առջև երկինքն ու երկիրը՝ ինչպես իմաստության հսկայական գիրք բացող:

Փառք Քո հավերժությանը՝ ժամանակավոր աշխարհում:

Փառք Քեզ՝ Քո գաղտնի ու հայտնի բարության համար:

Փառք Քեզ, իմ կրծքում ամեն հոգոցի համար:

Փառք Քեզ կյանքի ամեն քայլի համար, երջանկության ամեն մի վայրկյանի համար:

Փառք Քեզ Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 2

Տեր Աստված, լավ է Քեզ հյուր լինելը, քաղցրաբույր օդը, սարերը՝ երկինք բարձրացող, ջրերը՝ ինչպես անսահման հայլիներ, որոնք արտացոլում են ոսկեգույն շողերն ու ամպերի թեթևությունը: Ամբողջ բնությունը գաղտնի շնչում է, ամեն ինչը լցված է քնքշանքով: Եվ թռչուններն ու գազանները կրում են Քո սիրո կնիքը: Օրհնված է մայր երկիրն իր արագընթաց գեղեցկությամբ՝ արթնացնելով հավերժական ծննդավայրի կարոտ, որտեղ անապական գեղեցկությամբ կանչում են. Ալլելույա:

ԻԿՈՍ 2

Դու բերեցիր մեզ այս կյանք, ինչպես հմայիչ դրախտ: Մենք տեսանք կապույտ երկինքը, ինչպես երկնագույն գավաթ, որի լազուրում դողանջում են թռչունները, մենք լսեցինք անտառի խաղաղ աղմուկը, ջրերի քաղցրահունչ երաժշտությունը, մենք կերել ենք անուշահոտ քաղրահամ պտուղներ եվ բուրավետ մեղր: Լավ է Քեզ մոտ երկրի վրա, երջանիկ՝ Քո հյուրընկալությունում:

Փառք Քեզ կյանքի տոնի համար:

Փառք Քեզ ջրի սառնորակ թարմության համար:

Փառք Քեզ անուշահոտ հովտաշուշանների ու վարդերի համար:

Փառք Քեզ բազմազան քաղձր պտուղների և հատապտուղների համար:

Փառք Քեզ առավոտյան շաղի ադամադե փայլի համար:

Փառք Քեզ արթնացնող լուսավոր ժպիտի համար:

Փառք Քեզ երկրային կյանքի համար, որը երկնային հախանշան է:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 3

Սուրբ Հոգու ուժի բույրով է պատված ամեն մի ծաղիկ. բուրմունքի խաղաղ ծածանումը, գույների քնքշությունը, գեղեցկությունը Մեծության՝ փոքրի մեջ: Փառք ու պատիվ Կենսատու Աստծուն, որ մարգագետինները փռում է ինչպես ծաղկած գորգ, պսակադրված դաշտերը՝ ոսկե հասկերով, տերեփուկները՝ լազուրով, իսկ հոգիները՝ բերկրանքով ողողված: Զվարճացեք և երգեք Նրան. Ալլելույա:

ԻԿՈՍ 3

Ինչ հիանալի ես Դու գարնան տոնակատարությանը, երբ վերածնվում է ամեն մի արարած և հազար տոնայնություններով ուրախությամբ կանչում է Քեզ: Դու՝ կյանքի աղբյուր: Դու՝ մահը հաղթող: Լուսնի լույսի տակ և սոխակների երգերով կանգնած են հարթավայրերն ու անտառները, իրենց ճերմակ հարսնաքողերով: Ամբողջ աշխարհը Քո հարսնացուն է, նա սպասում է Քեզ, Անեղծ Փեսացուն: Եթե Դու կանաչ խոտին ես այսպես հագցնում, ապա ինչպես մեզ կկերպարանափոխես վերակենդանության ապագա դարում, ինչպես կլուսավորվեն մեր մարմինները, ինչպես կփայլեն հոգիները:

Փառք Քեզ, երկրի խավարում բազմազան գույներ, համ ու հոտ ճաշակող:

Փառք Քեզ՝ Քո ամբողջ բնության սիրալիության և փաղաքշանքի համար:

Փառք Քեզ նրա համար, որ Դու շրջապատեցիր մեզ Քո հազարավոր ստեղծագործություններով:

Փառք Քեզ՝ Քո խորը բանականության համար, որը դրոշմվել է ամբողջ աշխարհում:

Փառք Քեզ, աստվածափառորեն համբուրում եմ Քո անտեսանելի

նոսնահետքերը:

Փառք Քեզ, հավերժական կյանքի առջևում ցայտուն լույս վառող:

Փառք Քեզ՝ անմահ, անթերի, անապական գեղեցկության հույսի համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 4

Ինչպես ես Դու քաղցրացնում Քո մասին մտածողներին, ինչքան կենսարար է Քո սուրբ Խոսքը, եղևնուց փափուկ և մեղրից քաղցր են զրույցները Քեզ հետ: Աղոթքը Քեզ՝ թևավորում ու կենսավորում է. ինչ թրթիռով է այդ ժամանակ լցվում սիրտը, և ինչ հսկայական ու բանական են դառնում բնությունն ու ամբողջ կյանքը: Որտեղ Դու չկաս՝ այնտեղ դատարկություն է: Որտեղ Դու՝ այնտեղ հոգու հարստություն, այնտեղ կտնդանի հեղեղով լցվում է երգը. Ալլելույա:

ԻԿՈՍ 4

Երբ երկրի վրա իջնում է մայրամուտը, երբ թագավորում է երեկոյան քնի հանգիստը, հանգչող օրվա լուսության մեջ տեսնում են Քո դրյակները՝ փայլող ապարանքների կերպարով, արշալույսի ամպային շողքերում: Կրակն ու ծիրանին, ոսկին ու լազուրը մարգարեաբար խոսում են Քո անասելի գեղեցկության մասին, գաղտնորեն կանչում են. գնանք Հոր մոտ:

Փառք Քեզ երեկոյան աղաղ ժամին:

Փառք Քեզ, աշխարհին մեծագույն հանգստություն տվող:

Փառք Քեզ մայր մտնող արեվի հրաժեշտի շողի համար:

Փառք Քեզ բարի քնի հանգստի համար:

Փառք Քեզ խավարում Քո մոտ լինելու համար, երբ ամբողջ աշխարհը հեռու է:

Փառք Քեզ աղոթքների գործվանքի համար, որոնք հուզում են հոգիները:

Փառք Քեզ խոստացած զարթոնքի՝ հավերժ մայր չմտնող օրվա խնդության համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 5

Կենցաղային փոթորիկները սարսափելի չեն նրանց համար, ում սրտերում շողում է Քո լուսամփոփի կրակը: Ամենուր վատ եղանակ է ու մոթ, քՄամու սարսափ ու ոռնանք: Իսկ հոգում խաղաղություն է ու լույս, այնտեղ տաք է ու հանգիստ, այնտեղ է Քրիստոսը: Եվ սիրտը երգում է. Ալլելույա:

ԻԿՈՍ 5

Ես տեսնովմ եմ աստղերով շողացող Քո երկինքը: Ով՛ ինչքան Դու հարուստ ես, ինչքան Դու լույս ունես: Հերավոր լուսամփոփների շողերով ինձ է նայում հավերժությունը: Ես այնքան փոքր ու ոչինչ եմ, բայց ինձ հետ է Աստվածը, Նրա սիրալիր աջը ամեն տեղ պահպանում է ինձ:

Փառք Քեզ իմ մասին չղաղարող հոգսերի համար:

Փառք Քեզ մարդկանց հետ ձեռք բերած հանդիպումների համար:

Փառք Քեզ հարազատների սիրո եվ ընկերների հավատարմության համար:

Փառք Քեզ ինձ ծառայող կենդանիների հեզութձան համար:

Փառք Քեզ իմ կյանքի լուսավոր բոպենների համար:

Փառք Քեզ սրտերի պարզ ուրախության համար:

Փառք Քեզ ապրելու, շարժվելու, դիտելու համար:

Փառք Քեզ, Աստված հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 6

Ի՛նչ հսկայական ու մոտ ես Դու փոթորիկների ժամանակ: Ինչպես է երեվում Քո ամենակարող ձեռքը կայծակի շլացուցիչ ոլորաններում: Հիանալի է վեհությունը Քո: Աստծու ձայնը դաշտերի վրա է, անտառների աղմկում: Աստծու ձայնը ամպրոպի ու անձրեվի հանդեսում է, Աստծու ձայնը բոլոր ջրերի վրա է: Գովերգում ենք Քեզ հրաշունչ սարերի դորդյուններում: Դու թափահարում ես երկիրն ինչպես հագուստը: Դու մինչեվ երկինք ես բարձրացնում ծովի աճիքները: Գովերգում ենք

Քեզ մարդկային հպարտությունը հնազանդեցնելու համար, որ դուրս է կորզում ապաշխարության ողբը. Ալլելույա:

ԻԿՈՍ 6

Ինչպես կայծակը, երբ լուսավորում է խնջույքի շքասենյակը, ապա դրանից հետո խղճուկ են երեվում լուսամփոփի կրակները, այդպես Դու՝ հանկարծակի փայլեցիր իմ հոգում՝ կյանքիս ամենաուժեղ երջանկության ժամանակ: Եվ Քո շանթահար լույսից հետո ինչպիսի անգույն, մութ, անիրական թվացին նրանք, հոգիս նետվեց Քո հետեվից:

Փառք Քեզ՝ Անծայրություն ու Անսահմանություն՝ մարդկային բարձրագույն երազանքների:

Փառք Քեզ Աստծու հետ հաղորդվելու մեր չհագեցված ծարավի համար:

Փառք Քեզ մեր մեջ երկրային անբավարարություն ներշնչելու համար:

Փառք Քեզ մեր մեջ երկնքի հավերժ կարոտ դնելու համար:

Փառք Քեզ լույսի նրբագույն շողերով մեզ պատելու համար:

Փառք Քեզ մութ հոգիների իշխանության ջախջախողին, ամեն մի չարը ոչնչացման դատապարտողին:

Փառք Քեզ Քո հայտնության համար, Քեզ զգալու երջանկության ու Քեզ հետ ապրելու համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 7

Ձայների հիանալի ներդաշնակությամբ լսվում է Քո կանչը: Երգերի քաղցրալռությամբ, ներդաշնակ երանգներով, երաժշտական գեղեցկությունների բարձրությամբ, գեղարվեստական ստեղծագործությունների փայլով Դու բացում ես մեզ գալիք դրախտի նախադռները: Ամեն ճիշտ գեղեցիկը զորավոր կոչով տանում է հոգին Քեզ մոտ, ստիպում է հանդիսավոր երգել. Ալլելույա:

ԻԿՈՍ 7

Սուրբ Հոգու ներշնչանքով Դու լուսավորում ես նկարիչների, պոետների և գիտության հանճարների միտքը: Բարձրագույն Գիտակցության ուժով նրանք մարգարեաբար ըմբռնում են Քո օրենքները՝ բացահայտելով մեզ Քո ստեղծագործական իմաստության անհունությունը: Նրանց գործերը ակամայից խոսում են Քո մասին: Ո՛վ, ինչքան մեծ ես Դու Քո ստեղծագործումներու: Ո՛վ, ինչքան մեծ ես Դու մարդու մեջ:

Փառք Քեզ, տիեզերական օրենքներում անհասկանալի իմաստություն ներկայացնող:

Փառք Քեզ՝ ամբողջ բնությունը լի Քո գոյության օրենքներով:

Փառք Քեզ ամեն ինչի համար, որ Քո բարօրությամբ բացված են մեզ համար:

Փառք Քեզ նրա համար, որ Դու թաքցրիր Քո իմաստությամբ:

Փառք Քեզ մարդկային հանճարեղ մտքի համար:

Փառք Քեզ աշխտանքի կենարար ուժի համար:

Փառք Քեզ ոգևորության կրակոտ լեզուների համար:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 8

Ինչ մոտ ես Դու հիվանդության օրերին: Դու ինքդ ես այցելում հիվանդներին, Դու խոնարհվում ես տանջվողական օթյակին և սիրտը զրուցում է Քեզ հետ: Դու մեռնով հովացնում ես հոգին՝ ծանր ողբերգությունների ու տանջանքների ժամանակ: Դու ուղարկում ես անսպասելի օգնություն: Դու մխիթարող ես, Դու սեր ես՝ փորձող ու փրկող: Քեզ երգեր ենք երգում. Ալլելույա:

ԻԿՈՍ 8

Երբ ես մանկությունում արաջին անգամ գիտակցաբար կանչեցի Քեզ, Դու կատարեցիր իմ աղոթանք, և հոգիս պատեց աստվածային խաղաղությամբ: Այդ ժամանակ հասկացա, որ Դու բարիք ես, և երջանիկ

են Քեզ մոտ եկողները: Ու սկսեցի կանչել Քեզ նորից ու նորից և մինչև այժմ կանչում եմ.

Փարք Քեզ, իմ ցանկությունների բարի կատարող:

Փառք Քեզ, ինձ վրա օր ու գիշեր արթնացնող:

Փառք Քեզ, խնդրանքից առաջ բարության հեղեղ ուղարկող:

Փառք Քեզ, տրտմությունների բուժող

Փառք Քեզ՝ Քեզ հետ չկան անհույս կորուստներ, Դու բոլորին պարզևում ես հավերժական կյանք:

Փարք Քեզ՝ Դու անմահություն պարզևեցիր ամեն բարուն ու բարձրին:

Փառք Քեզ՝ Դու խոստացար մեզ ցանկալի հանդիպումը՝ մահացածների հետ:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 9

Ինչի՞ց է, որ բնությունը գաղտնաբար ժպտում է Քո տոնական օրերին: Ինչի՞ց է, որ սիրտը լցվում է հրաշալի թեթևությամբ՝ ոչ մի երկրայինով չհամեմատվող, և զոհասեղանի և եկեղեցու օդը դառնում է լուսաբեր: Դա Քո վերին օրհնության ծածանումն է, դա Ֆավորյան լույսի փայլն է, երբ երկինքն ու երկիրը գովաբանորեն երգում են. Ալլելույա:

ԻԿՈՍ 9

Երբ Դու ոգեշնչեցիր ինձ՝ ծառայել մերձավորին, իսկ հոգիս լուսավորեցիր հնազանդությամբ, այդ ժամանակ Քո անթիվ շողերից մեկն ընկավ իմ սրտի մեջ, և այն դարձավ լուսակիր, ինչպես երկաթը՝ կրակի մեջ: Ես տեսա Քո խորհրդավոր անբռնելի Կերպարանքը:

Փառք Քեզ, մեր կյանքը կերպարանափոխող բարի գործերով:

Փառք Քեզ՝ Քո ամեն մի պատվիրանում անասելի քաղձրություն դրոշմող:

Փառք Քեզ՝ ակնհայտորեն հայտնվող այնտեղ, որտեղ անուշաբուրում է բարեսրտությունը:

Փառք Քեզ, որ մեզ ուղարկում ես անհաջողություններ ու տխրություն, որպեսզի մենք լինենք զգոն՝ ուրիշի տառապանքներին:

Փառք Քեզ, ով մեծ պարգև է դրել բարու ինքնարժեքին:

Փառք Քեզ՝ ամեն բարձր ուժգնությունն ընդունողին:

Փառք Քեզ, սերը՝ բոլոր երկրայինից ու երկնայինից վերև բարձրացնողին:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 10

Փշրվածը չի կարելի վերականգնել, բայց Դու վերականգնում ես նրանց, ում խիղճը մոխրացել է, Դու վերադարձնում ես անհույս կորցրած նախկին գեղեցկությունը՝ հոգիներին: Քեզ հետ չկա ոչինչ անուղղելի: Դու ամբողջությամբ սեր ես: Դու՝ Ստեղծող եվ Վերակերտող: Քեզ գովում ենք երգով. Ալլելույա:

ԻԿՈՍ 10

Աստված՝ իմ, հպարտ հրեշտակ Դեննիցի պառակտումը առաջնորդող: Փրկիր ինձ Քո վերին օրհնության ուժով, մի թող ինձ՝ անջատվել Քեզանից, մի թող մոռանամ Քո բոլոր բարեգործություններն ու պարգևները: Սրի՛ր իմ լսողությունը, որպեսզի իմ կյանքի բոլոր վայրկյաններում լսեմ Քո գաղտնի ձայնը և կանչեմ Քեզ՝ Ամենահասիդ.

Փառք Քեզ բարեշնորհ նախազգացմունքների համար:

Փառք Քեզ՝ ներքին ձայնը մատնացույց անելու համար:

Փառք Քեզ՝ երազում և արթուն ժամանակ՝ հայտնությունների համար:

Փառք Քեզ՝ մեր անօգտակար մտադրությունների կործանողին:

Փառք Քեզ, մեզ տառապանքներից սթափեցնող՝ կրքերից հարբած վիճակում:

Փառք Քեզ, սրտի գոռոգության փրկարար հնազանդեցնող:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 11

Դարերի սառցե շղթաների միջից ես զգում եմ Քո Աստվածային շնչառության տաքությունը, լսում եմ արյան շիրը: Դու արդեն մոտ ես, ժամանակի շղթան քանդվեց, ես տեսնում եմ Քո Խաչը, այն ինձ համար է: Իմ հոգին փոշի է Խաչի առաջ. այստեղ սիրո և փրկության տոնակատարություն է, այստեղ չի լռում գովքը հավիտյան. Ալլելույա:

ԻԿՈՍ 11

Երջանիկ է նա, ով ըմբոխշնել է ընթրիքը՝ Քո Թագավորությունում, բայց Դու արդեն երկրի վրա հաղորդակից արիր ինձ այդ երջանկությանը: Քանի անգամ Դու՝ Աստվածային աջ ձեռքով սփռեցիր ինձ Քո Մարմինն ու Արյունը, և ես՝ անչափ մեղավորս, ընդունեցի այդ սրբությունը և զգացի Քո սերը՝ անպատմելի, գերբնական.

Փառք Քեզ վերին օրհնության անհասկանալի կենսարար ուժի համար:

Փառք Քեզ, Քո Եկեղեցին կանգնեցնող, ինչպես խաղաղ հանգրվան՝ տանջվող աշխարհի համար:

Փառք Քեզ, մկրտության կենսարար ջրերով մեզ վերածնող:

Փառք Քեզ, Դու մեղանշողներին վերադարձնում ես դյուրաբեկ շուշանների մաքրությունը:

Փառք Քեզ թողության չցամաքող խորխորոտ:

Փառք Քեզ կյանքի գավաթի համար, հավիտյան երջանկության հացի համար:

Փառք Քեզ՝ մեզ դեպի երկիք ուղղեկցող:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

ԿՈՆԴԱԿ 12

Ես շատ անգամ եմ տեսել Քո փառքի արտացոլումը՝ մեռնողների դեմքին: Ինչպիսի՜ չնաշխարհիկ գեղեցկությամբ ու երջանկությամբ

լուսավորված էին նրանք, ինչպիսի՛ թափանցիկ, աննյութական էին նրանց դիմագծերը: Դա ձերք բերած երջանկության ու հանգստության հանդես էր: Լռությամբ նրանք կանչում էին Քեզ: Իմ վերջին ժամին լուսավորիք իմ հոգին, որը կանչում է. Ալլելույա:

ԻԿՈՍ 12

Ի՞նչ է իմ գովասանքը Քո առաջ: Ես չեմ լսել քերովբեների երգերը, դա բարձր հոգիների բախտավորությունն է, բայց ես գիտեմ ինչպես է Քեզ գովաբանում բնությունը: Ձմռանը ես ինչպես լուսնի լռության մեջ ամբողջ աշխարհը մեղմ աղոթում է Քեզ՝ զգեստավորված սպիտակ շուրջառում, փայլելով ձյան աղամանդներով: Ես տեսա, ինչպես է ուրախանում Քեզ համար դուրս եկող արևը, և թռչունների խորը թնդացնում էր Քո գովասանքը: Ես լսեցի, ինչպես թաքուն Քո մասին աղմկում է անտառը, երգում են քամիները, քչքչում են ջրերը, ինչպես քարոգում են լուսատուների երգչախմբերն իրենց բարեկազմ շարժումներով՝ անվերջանալի տարածությունում: Ի՞նչ է իմ գովքը: Բնությունը լսում է Քեզ, իսկ ես՝ ոչ, բայց քանի ապրում եմ և տեսնում եմ Քո սերը, ուզում եմ շնորհակալություն հայտնել, աղոթել ու կանչել.

Փառք Քեզ, մեզ լույս ցույց տվողին:

Փառք Քեզ, մեզ անչափ ու խորը սիրով սիրողին:

Փառք Քեզ, մեզ Հրեշտակների և սրբերի լուսավոր շարքերում համակող:

Փառք Քեզ, Ամենասուրբ Հայր, Քո Թագավորությունը մեզ պատգամող:

Փառք Քեզ, Որդուն Քավության տվողին, որն Իր Արյունով մեզ վերածնեց:

Փառք Քեզ՝ Սուրբ Հոգուն, ապագա դարի Կենսատու Արև:

Փառք Քեզ ամեն ինչի համար, ո՛վ Աստվածային Երրորդություն՝ ամենաբարի:

Փառք Քեզ, Աստված, հավիտյան:

Ո՛վ ամենաբարի և կյանք տվող Երրորդություն: Ընդունիր շնորհակալությունը՝ Քո բոլոր ողորմությունների համար և մեզ արժանի դարձրու Քո բարի գործերին, որպեսզի բազմապատկելով մեզ վստահված տաղանդները՝ լինենք Աստծու հավերժական ուրախության մեջ հաղթական գովքով. Ալլելույա:

Այս կոնդակը կարդացվում է երեք անգամ, հետո 1-ին իկոսն ու 1-ին կոնդակը

